ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 98-րդ հոդվածի 5-րդ մասում **«ուսումնական հաստատությունում» բառերից հետո լրացնել «և (կամ) «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում» բառերը:**

~~1) «փորձառություն է» բառից հետո լրացնել «համարվում նաև» բառերը.~~

~~2) «հաստատությունում» բառից հետո լրացնել «կամ հետբուհական, լրացուցիչ կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունում» բառերը:~~

Հոդված 2. **Օրենքի 106-րդ հոդվածի** առաջին~~ մասից հանել «և վերջին ութ տարիների ընթացքում առնվազն հինգ տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած» բառերը~~ **մասում «ուսումնական հաստատությունում» բառերից հետո լրացնել «և (կամ) «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում» բառերը**:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: